ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի հայ նորագույն գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

«ՀԵՂԻՆԱԿԻ ԱԹՈՌ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակակից ձևերը թելադրում են սովորեցնողի և սովորողի փոխհամաձայնեցված գործունեություն, որն իրագործվում է սահմանված կանոններով և որոշակի ընթացակարգով, որի հիմքում ընկած է անհատական և խմբային ուսուցման հարաբերակցությունը, իմացական գործունեության մեջ սովորողի ակտիվության և սովորեցնողի ղեկավարության աստիճանը:

Հանգուցային բառեր և բառակապակցություններ՝ գրական դիմանկար, հոգեբանական հարթություն, հոգեկերտվածք, փոխներգործուն շփում:

Աշակերտակենտրոն ուսուցման գործընթացը պահանջում է ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնց կիրառման արդյունքում աշակերտը ուսուցանվող նյութը չի ստանում որպես պատրաստի ամբողջություն՝ տրված ուսուցչի կողմից, այլ՝ այդ թեմայի կամ խնդրի ամբողջացման գործում ունենում է իր անմիջական ներդրումը՝ որպես հետազոտող, պրպտող և համադրող ուժ: Այս է պատճառը, որ ժամանակակից ուսուցման գործընթացում կարևորվում է հետազոտական մեթոդների կիրառումը, որտեղ մեծ տեղ է կազմում աշակերտի ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը: Ուսուցման ժամանակակից մեթոդների և եղանակների շարքում հետաքրքիր է «Հեղինակի աթոռ» մեթոդը: Մեթոդի կիրառումը հնարավոր է մի քանի մոտեցմամբ՝ պայմանավորված ուսուցանվող նյութով և աշակերտների տարիքով:

Մոտեցում 1–ին. Միջին դասարաններում կարելի է կիրառել հետևյալ մոտեցմամբ.հանձնարարված նյութը, որն աշակերտը կազմել է ինքնուրույն՝ որոշակի աղբյուրներ ուսումնասիրելով, աշակերտի կողմից ներկայացվում է որոշակի հոգեբանական ընդգծված հարթության վրա՝ դասասենյակի կենտրոնում դրված հեղինակի աթոռից: Այսինքն՝ աշակերտը, «պատվավոր» այդ դիրքից իր կատարած աշխատանքը ներկայացնելով, տեղափոխվում է հոգեբանական մի նոր միջավայր, իր դասընկերներից փոքր–ինչ բարձր հարթություն, որովհետև ինքն այդ պահին ուսուցանող է. նոր կարգավիճակ, որը տարբերվում է իրեն լսող և իրենից սովորող /այդ պահին/ դասընկերներից: Ուսուցման այս ձևն օգնում է գրավելու շրջապատի ուշադրությունը սեփական անձի նկատմամբ, իսկ դա նպաստում է աշակերտի մեջ պատասխանատվության զգացման արթնացմանը: Նա, գիտակցելով, որ ինքը գտնվում է դասարանի ուշադրության կենտրոնում, էլ ավելի մեծ պատասխանատվությամբ կմոտենա իրեն առաջադրված խնդրին, ավելի լուրջ կմոտենա առաջադրանքին և ավելի խորքային հետազոտական և որոնողական աշխատանք կատարելով՝ կամբողջացնի այն թեման, որը պետք է ներկայացնի իր դասընկերներին և ուսուցչին: Իր կատարած աշխատանքը «հեղինակի աթոռից» ներկայացնելով՝ աշակերտը ինքնաբերաբար կփոխի նաև իր խոսքի հնչեղությունը՝ շրջապատի վրա տպավորություն գործելու համար:

Այդ դիրքով խոսելիս նրա մեջ կձևավորվի սեփական խոսքին հետևելու և ասելիքը ճիշտ շեշտադրումով ներկայացնելու կարողություն, որը կբարձրացնի նրա ինքնարժևորումը:

Մոտեցում 2–րդ. Մեթոդի կիրառումը կարող է լինել հանպատրաստի՝ որևէ թեմայի ամփոփման փուլում: Ուսուցիչը «հեղինակի աթոռին» նստելու պատիվը տալիս է դասարանի աշակերտներից մեկին /աշակերտի ընտրությունը պետք է ճիշտ կատարել. նա պետք է լինի նյութին գիտակ, ճկուն մտածողությամբ, օժտված ճիշտ և արագ կողմնորոշվելու կարողությամբ/: Ընտրված աշակերտը հանդես է գալիս որպես այն հեղինակ, որի գրական ստեղծագործությանն է նվիրված տվյալ դասը: Օրինակ՝ «Քաոս» վեպը անցնելիս հեղինակի աթոռին կարող է նստել ընտրված աշակերտ Շիրվանզադեն, որը պետք է պատասխանի աշակերտների՝ իրեն ուղղած բոլոր հարցերին: Այս դեպքում շատ հետաքրքիր կլինեն և՛ աշակերտների՝ հեղինակին ուղղված հարցերը, և՛ հեղինակի պատասխանները՝ դիպուկ, կշռադատված և իրականությանը մոտ: Կարող են հնչել նաև այնպիսի հարցեր, որոնց պատասխանները աշակերտ–հեղինակը, լավ ճանաչելով տվյալ գրողի գրական երկերը, կփորձի ինքնուրույն տրամաբանելով տալ:

Օրինակ՝

Հարց 1–ին. Ինչու՞ Դուք «Քաոս» վեպը գրեցիք մտահղացումից տասնհինգ տարի հետո:

Հարց 2–րդ. Ինչպիսի՞ն էր Ձեզ համար արդյունաբերական քաղաքը՝ Բաքուն. Ձեր շուրջը եղե՞լ են վեպի կերպարների նախատիպերը:

Հարց 3. Ո՞ր կերպարն է ավելի բարդ ու դժվար գրական երկունք ունեցել:

Հարց 4. Ձեր մտքերի աշխարհում հաճա՞խ են բախվել Ձեր կերտած հերոսները:

Հարց 5. Տարիների հեռավորությունից որևէ բան կփոխե՞ք Ձեր վեպում:

Թվում է՝ նմանատիպ հարցերի պատասխանները հետաքրքիր կլինեն, որովհետև նմանատիպ հարցերը փոքրինչ երևակայություն և տրամաբանություն են պահանջում. ինչ խոսք, պատասխանի մեջ պետք է գերիշխի հեղինակի աշխարհայացքն ու մտածողությունը: Նյութի ամփոփման այս եղանակը հետաքրքիր կդարձնի դասը, այն կլինի ինքնատիպ իր տեսակով, աշակերտները կունենան ինքնաբավ զգացողություն, նրանց հուզող շատ հարցեր յուրօրինակ դիտանկյունից պատասխան կստանան, կվայելեն գրողի «հետաքրքրիր ներկայությունը» իրենց կողքին, «անմիջական շփումը» գրողի հետ հետաքրքիր զգացողություններ կարթնացնի: Հոգեբանական հետաքրքիր դաշտում կլինի նաև աշակերտ–հեղինակը. մի պահ նրա մեջ կարթնանա գրողը, կթափանցի նրա ներաշխարհը, և այդ զարմանալի տարածության մեջ յուրօրինակ ինքնակառավարումը նրա մեջ կարթնացնի նոր զգացողություններ, որոնք կուղեկցեն նրան ամբողջ կյանքում:

Մոտեցում 3–րդ. Այս դեպքում մեթոդի կիրառումը պահանջում է նախապատրաստական մեծ աշխատանք: Մեթոդը պետք է կիրառել ոչ թե որևէ գրողի որևէ ստեղծագործության ամփոփման փուլում, այլ տվյալ գրողի ողջ գրական ճանապարհի ուսուցման ամփոփման փուլում: Այս դեպքում հեղինակի աթոռին հայտնված աշակերտ–գրողը պետք է ինչ–որ տեսանկյունից ամբողջացնի տվյալ հեղինակի դիմանկարը: Իսկ դա պահանջում է նախապատրաստական լուրջ աշխատանք: Օրինակ՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններն ուսումնասիրելիս ամփոփման փուլում գրողի դիմանկարը կարելի է կերտել 3 ուղղությամբ՝ հեղինակի դիմանկարը՝ որպես մարդ, անհատ, հեղինակի դի-

մանկարը ՝ որպես հասարակական գործիչ, հեղինակի դիմանկարը՝ որպես գրող, մտածող:

Այստեղ նույնպես աշակերտների ընտրությունը պետք է ճիշտ կատարել, ընտրել դասարանի կարող ուժերին, որոնք կհաղթահարեն այն դժվարությունները, որոնք դրված են իրենց առջև: Վերոնշյալ մոտեցմամբ նյութի ուսումնասիրության դեպքում պետք է ընտրվեն երեք աշակերտներ, որոնցից յուրաքանչյուրը պետք է որոշակի ժամանակահատվածում կերտի հեղինակի դիմանկարն իրեն հանձնարարված կտրվածքով: Ուսուցչի ուղղորդմամբ նրանցից յուրաքանչյուրը պետք է ուսումնասիրի հեղինակի անցած ճանապարհը և ամբողջացնի նրա դիմանկարը իր առջև դրված տեսանկյունից: Այսինքն՝ Թումանյանի դիմանկարը՝ որպես մարդ, անհատ, կերտող, աշակերտը պետք է ուսումնասիրի նրա անցած ճանապարհը. որտեղ է ծնվել, մեծացել, ինչ կրթություն է ստացել, մարդկային ինչ հարաբերություններ են եղել նրա ճանապարհին: Ուսուցչի ուղղորդմամբ նա պետք է ուսումնասիրի այն աղբյուրները, որոնցից նա կարող է հետաքրքիր տեղեկություններ, պատմություններ իմանալ նրա մարդկային նկարագրի մասին: Նա կարող է ուսումնասիրել և՛ Թումանյանի մասին ժամանակակիցների հուշերը, և՛ Թումանյանի նամակները, և՛ արխիվային նյութերը, և՛ գրականագիտական երկերը ու հոդվածները, գրողին նվիրված մենագրությունները: Աշակերտը գրողի մանկության, ընտանիքի մասին շատ հետաքրքիր նյութեր կարող է գտնել Արամ Ինճիկյանի «Տոհմագրություն, ընտանիք, մանկություն» /Եր.1969 թ./ գրականագիտական աշխատության մեջ, որտեղ հեղինակը, հենվելով արխիվային շատ փաստերի վրա, վարպետորեն կերտել է Թումանյան մարդու նկարագիրը: Հետազոտող աշակերտը հետաքրքիր տեղեկություններ կարող է ստանալ նաև Ն. Թումանյանի «Հուշեր և զրույցներ» գրքում:

Իրեն հանձնարարված նյութի ամբողջական ուսումնասիրությունը կատարելուց հետո հեղինակի աթոռին նստած աշակերտ Թումանյանը առաջին դեմքով պատմում է իր մանկության, ծննդավայրի, ծնողների մասին:

Այնուհետև աշակերտը փորձում է ամբողջացնել Թումանյանի կյանքի վաղ շրջանը. Ծնվել է 1869 թ. փետրվարի 7–ին Լոռվա Դսեղ գյուղում, մի նահապետական բազմանդամ ընտանիքում: Մայրը՝ Սոնան, գեղջկուհի է, հայրենի սարերի նման պարզ ու մաքուր, հայրը՝ Տեր Թադևոսը՝ գյուղական քահանա: «Մեծ բախտ է լավ ծնողներ ունենալ, մանավանդ՝ լավ մայր, մայրն ամեն ինչ է, իմ մայրը շատ էր վայրենի...Նա սարի պախրա էր, եղջերու...արտաքինով շատ գեղեցիկ, զարմանալի առողջ ու տաք սրտի տեր, շատ էր ջիգյարով, իհարկե, դեպի իրեն երեխաները, և ինչ–որ սարի բան կա իմ մեջնանիցս է…

Իմ մերը թռչող կին էր. արծվի թռիչք ուներ: Ամենաբարձր սարերում, ծաղկոտ տեղերում է պահել ինձ, կանաչներում, աղբյուրների մոտ...»:[1] «Ուրիշ բան էր իմ հայրը լավ մարդու կատարյալ տիպը, Մեծ մարդ էր, զարմանալի խորը մարդ. անդունդի խորություն ուներ, լայն հոգի, շատ մեղմ, նուրբ ժպիտը միշտ դեմքին. զարմանալի սրախոս էր, լուրջ սրախոս: Երբեք իր նյութական պակասություններից չէր խոսի, իրեն միշտ հարուստ էր ցույց տալիս: Շատ էր սիրում երգել, մեկ–մեկ էլ ինքը երգեր էր հորինում, չոնգուր ուներ, ածում էր իրիկունները: Լավ զրից անող էր»:[2]

Ինչպես բոլոր մեծերի մոտ /Շեքսպիր, Լև Տոլստոյ, Խ. Աբովյան, Վ. Տերյան/ Թումանյանի մոտ էլ մանկության լուսե հեքիաթը դարձել է գրողի բանաստեղ-

[1] Տես՝ Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1987 թ., էջ 299:
[2] Տես՝ նույն տեղում:

ծական խառնվածքի, խոհափիլիսոփայական մտքերի ձևավորման ատաղձը:

«Մանկությունը մարդու կյանքի ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ... Ամեն բան, ինչ որ շրջապատում է նրան, ինչ որ գոյություն ունի աշխարհում՝ սնունդ է նրա համար»[1]:

Իսկ Թումանյանի մանկության հույզերը ծնվում են մանկան անհոգ խաղերից և կախարդական գիշերների խորհրդավոր լռության մեջ հյուսված հեքիաթներից ու զրույցներից: Երեխաները ճմռան երկար գիշերներին, մեծերի հետ նստած օջախի շուրջը, լսում են զրույցներ ու առասպելներ՝ համեմված ժողովրդական մտածողության խորախորհուրդ շերտերով:

«Ո՛չ ուսումնարան կար, ո՛չ դաս, ո՛չ դաստիարակություն. ազատ էինք միանգամայն ու խաղում էինք. ինչքան էինք խաղում: Ու ո՞նց էինք իրար սիրում, ո՞նց էինք իրար սովորել: Սոված ժամանակներս էլ վազում էինք հացի տաշտից մի մի կտոր հաց առնում, պանրի կարասիցը մի կտոր պանիր ու էլի ետ շտապում իրար մոտ: Իրիկուններն էլ հավաքվում էինք, ծիծաղ բաներ ասում կամ հեքիաթ պատմում»: Այսպես լուսավոր ու պայծառ է անցնում Թումանյանի կյանքի՝ իր խոսքերով ասած «անգետ» շրջանը: Այնուհետև գալիս է սովորելու տարիքը: Գրաճանաչ է դառնում հայրենի գյուղում, սկզբում՝ Գրիշկա բիձայի մոտ, հետո՝ Սահակ վարժապետի մանկավարժական սառնասիրտ, անողոք դաստիարակության ներքո: 1879թ. հայրը Թումանյանին տանում է Ջալալօղլի՝ Տիգրան Տեր–Դավթյանի ուսումնարանը: Իր հուշերում Թումանյանը ջերմ է խոսում այդ տարիների մասին. այստեղ նա ստանում է շատ գիտելիքներ, նրա մեջ արթնանում է սերը բանաստեղծության, պոեզիայի հանդեպ: Եվ բանաստեղծական առաջին թոթովանքները. «Շատ վաղ եմ սկսել ոտանավոր գրել: 10–11 տարեկան ժամանակս ժողովրդի մեջ երգվող երգերին տներ էի ավելացնում և գրում էի զանազան ոտանավորներ երգիծաբանական և հայրենասիրական, սիրային»:

1883 թ. Տեր–Դավթյանի դպրոցը փակվում է, հայրը որդուն տանում է Ներսիսյան դպրոց: Թումանյանը սրտի թրթիռով է հիշում այդ դեպքերը. հայրը Թիֆլիս մեկնելու համար մի ունևոր գյուղացուց տասնհինգ մանեթ պարտք է վերցնում, մայրը հեկեկանքով գրկում է որդուն, դժվարությամբ բաժանվում, հոր խիստ հորդորները լռեցնում են մոր հեծկլտոցը. որդուն տանում է քաղաք, որ ուսում ստանա և երջանիկ ապագա ունենա:

Սակայն դպրոցական այս նոր միջավայրը Թումանյանի սրտով չէր. բնության ազատ գրկից հեռացած պատանուն ճնշում էին տեղի պայմանականությունները ու մանկավարժական չոր կաղապարները: Նա չորրորդ դասարանից դպրոցը թողնում է, հեռանում դպրոցից՝ հույսը դնելով իր ուժերի վրա, ընտրում է ինքնակրթության դժվար ուղին: Նա ապրում է ամենապարզ կենցաղով, սուղ, հասարակ պայմաններում, երբեմն էլ կիսաքաղցած: Նա աշխատանք է որոնում: Վերջապես ընկերոջ՝ Անուշավան Աբովյանի հորեղբոր՝ քահանա Աբովյանի միջնորդությամբ դառնում է գրագիր հոգևոր կոնսիստորիայում: Իսկ դրանից երկու տարի հետո ամուսնանում է վաճառական Բադազ Մաճկալյանի աղջկա՝ Օլգայի հետ: Նրանց հետ էր ապրում նաև ծխատեր քահանա Հովհաննես Մարտիրոսյանը, որը Օլգայի հորաքրոջ ամուսնու եղբայրն էր: Նա որդեգրում է բարեկամի աղջկան՝ Օլգային: Եվ հենց սկզբից Թումանյանն ընկնում է քահանա հոգեհոր ծուղակը. քահանայի երկարատև համառումներից և ճնշումից հետո

[1] Տես՝ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, 1951 թ. հ. 4, էջ 328:

կնքվում է ներքին պայմանագիր, ըստ որի՝ Թումանյանը աներոջ ծերության ժամանակ պարտավոր է տեր կանգնել նրա ծխերին, դառնալ քահանա; Ինչպես պատմում է Թումանյանի կինը՝ Օլգան, նորափեսան եկել էր իրենց տուն գրեթե դատարկաձեռն. բերել էր մի զույգ սպիտակեղեն և երկու գիրք. մեկը՝ «Վերք Հայաստանի», մյուսը՝ «Հյուսիսափայլի» մի համարը: Այս էր պատճառը, որ Օլգայի ծնողները «շղթայում» են նրան: «Երբեմն խնդրելով, երբեմն ստիպելով ծնողներս նրան ղրկում էին եկեղեցի, որ ժամերգություն սովորի»: Եվ աներոջ ճնշման տակ 1889–1990թթ. երբեմն ստիպված էր լինում հագնել տիրացուի զգեստը և զբաղվել ժամասացությամբ:Այս տխուր օրերի մասին վկայություններ կան ընկերների՝ Սիմեոն Հովվյանի և Արսեն Ղշտճյանի հուշերում: «Շատ հետաքրքրական էր այն երեկոն, երբ սկսեց պատմություններ անել իր կյանքից, 90–ական թթ–ից, երբ տանը ստիպելիս են եղել, որ քահանա դառնա: Պատմում էր իր տիրացության շրջանից, երբ տանվեց եկեղեցի էր փոխել, ամեն տեղ մի արկածի հանդիպելով՝ թողել ու փախել: Այդ երեկո նրա զրույցը տևեց մինչև լուսադեմ: Պատմում էր բոլոր արկածները, թե ինչ ծանր պայքարով ու աղմուկներով էր ազատվել քահանայությունից: Ծիծաղի, անվերջ ծիծաղի երեկո էր, թեև իրոք այդ ծիծաղի մեջ արցունք շատ կար»[1]:

1898 թ–ին Թումանյանն արդեն մեծահամբավ հեղինակ էր, բազմաթիվ երեխաների հայր: Նյութական սուղ վիճակով պայմանավորված ընտանեկան ծանր դրությունը շատ էր դառնացրել հեղինակի հոգին: Սակայն այդ ամենը կարողացել է հաղթահարել բանաստեղծական աշխարհի հզոր լիցքերով և քաղաքացիական պարտքի գիտակցմամբ: Հասարակական–քաղաքական կյանքի վայրիվերումները Թումանյանի հոգում արթնացնում են ուրիշ աշխարհ՝ պայմանավորելով Թումանյան մարդու մեկ ուրիշ դիմանկար՝որպես հասարակական գործիչ:

Առաջին աշակերտը, որը ամբողջացնում է Թումանյան մարդու դիմանկարը, այստեղ հեղինակի աթոռը զիջում է այն աշակերտին, ով պետք է ընդհանրացնի Թումանյան քաղաքացու, հասարակական գործչի դիմանկարը: Նա իր խոսքը պետք է սկսի Թումանյանի կյանքի այն շրջանից, երբ նրա հոգում արթնանում են ազատության ուղիների մասին մտքեր ու խոհեր, որոնք նրան տանում են դեպի բարձր իդեալներ ու արժեքներ: Նրա այս խոհերի ու հույզերի առաջին հանգրվանը Ներսիսյան դպրոցի սաների այն խումբն էր, որտեղ հավաքված պատանիները կենսական ազդակներ էին ստանում արտասովոր մարդկանց կյանքից, պայքարից, իդեալներից,և նրանց առջև բացվում էին հոգևոր նոր հորիզոններ: Երազներով տոգորված պատանիների այս խմբից հետո Թումանյանը դառնում է իշխանուհի Մարիամ Թումանյանի գրական հինգշաբաթների մասնակից: Դա մի մեծագույն ջերմությամբ պարուրված գրական անկյուն էր՝ պարարտ հող Թումանյանի բանաստեղծական մտքի համար: Այս շրջանում Թումանյանն ապրում է և՛ գրական, և՛ քաղաքացիական վերելք: Նա մեծ եռանդով մասնակցում է «Ծիածան» աշակերտական ընկերության գաղտնի պարապմունքներին: Եվ 1898–1902 թթ. ստեղծված այդ ընկերությունը դառնում է ընդդիմություն ցարական ինքնակալության ազգահալած քաղաքականության դեմ: Այստեղ ուսումնասիրում էին հայոց լեզուն, գրականությունը, հայոց պատմությունը, քաղաքական ուսմունքները, հաճախ էր քննարկվում նաև հայկական հարցը: Թումանյանն ապրում էր գրական

[1] Տես՝ Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1987 թ., էջ 148:

և քաղաքացիական բուռն ներշնչումներով՝ դառնալով հայ մշակույթի կենտրոնական դեմքը: 20–րդ դարասկզբին մեր գրական, հասարակական և քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում հանդես է եկել Թումանյանը՝ որպես աջակցող, որպես նախաձեռնող, որպես խնդրի ծանրության կենտրոն: Թումանյանին շատ էր հուզում հայ գրական գալիքը և գրողների բախտը: Եվ 1899 թ. ստեղծում է մի խմբավորում՝ «Վերնատուն», որը մեծ դեր կատարեց գրական կյանքի ճանապարհին:

Հ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Ավ. Իսահակյան, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը և շատ գրողներ «Վերնատան» հավաքույթներին քննարկում էին բազմաթիվ հարցեր: Հավաքույթները տեղի էին ունենում Թումանյանի տան վերնահարկում, որտեղից էլ խմբավորման անունը, որն ուներ նաև մեկ ուրիշ զուգահեռ. «Դա հիշեցնում էր մի ուրիշ վերնատուն, ուր հավաքվեցին Քրիստոսի աշակերտները: Դրա մեջ ինչ–որ հոգեկան ներքին իմաստ կար»[1], հիշում է Դ. Դեմիրճյանը: Տեղի էր ունենում հայ հոգևոր ուժերի, գրականության և մշակույթի ներկայացուցիչների ներքին պայքար:

1912թ. Թումանյանը կազմակերպում է հայ գրողների կովկասյան ընկերությունը, որը նյութական և բարոյական աջակցություն էր ցույց տալիս գրողներին, գնահատում և պահպանում գրականության մեծագույն արժեքները:

Հայաստան աշխարհի քաղաքական ճակատագիրը շատ էր մտահոգում Թումանյանին: Թումանյանի հայրենանվեր հոգին տագնապի մեջ էր. Առաջին աշխարհամարտը ցնցեց Արևմտյան Հայաստանը, այրվում էին հայոց գյուղերն ու քաղաքները: Կատարվածից սարսափած Թումանյանը կամավորական ջոկատների հետ շրջում էր Արևմտյան Հայաստանում, սահմռկում թուրքական յաթաղանի ոճրագործություններից: Այնուհետև մեծ ջանքերով փորձում է օգնել Էջմիածնի պատերի տակ ծվարած գաղթականներին: Այս օրերին նրա կողքին էր նաև Թումանյանի դուստրը՝ Նվարդը, որը աշխատում էր որպես գթության քույր:

Այդ սարսափելի աղետներից հետո խորհրդային շրջանում Թումանյանը դարձյալ մտածում էր իր ազգի մասին, երազում էր ստեղծագործական տուն ստեղծել հայ գրողների համար: 1921թ. Թիֆլիսում նա հիմնադրում է հայ արվեստի տունը: Նույն թվականին նա ստանձնում է Հայաստանի օգնության կոմիտեի նախագահի պարտականությունները: Հետաքրքիր է այն փաստը, որ երբ Հայաստանի մինիստրների խորհրդի նախագահ Ա.Մյասնիկյանը խնդրել է Թումանյանին դառնալ ՀՕԿի նախագահ, Թումանյանը սկզբում մերժել է նրան՝ կարևորելով իր ստեղծագործական անելիքները: Սակայն երբ հաջորդ օրը Երևանում տեսնում է քաղցից մեռած մարդու դիակ, կոմիտեի նիստում փոխում է իր որոշումը՝ նշելով, որ քանի Հայաստանում քաղցից մարդ է մեռնում, գրողն իրավունք չունի հանգիստ նստել տանը և ստեղծագործել...

Չնայած օր օրի վատթարացող առողջությանը՝ նա անմնացորդ նվիրվում է այդ գործին, մինչև կյանքի վերջին օրը ծառայում ժողովրդին...

Ահա այսպես հիմնվելով Թումանյանի կենսագրական փաստերի վրա՝ երկրորդ աշակերտը հեղինակի «աթոռից» ներկայացնում է Թումանյանի՝ հասարակական գործչի դիմանկարը, որից դուրս հորդացող մեծ հայրենասիրությունը համակում է բոլոր աշակերտներին: Այնուհետև «հեղինակի աթոռին», նստում է երրորդ աշակերտը, որը պետք է կերտի Թումանյան բանաստեղծի, մտածողի դիմանկարը: Հիմնվելով նախապես

[1] Տես՝ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, 1987 թ., հ. 14, էջ 242:

ուսումնասիրված գրականագիտական աղբյուրների վրա՝ նա ընդհանրացնում է Թումանյանի գրական ճանապարհը՝ սկսած 10–11 տարեկանում գրված առաջին բանաստեղծություններից: Պահպանելով Թումանյանի ստեղծագործությունների ժամանակագրությունը՝ նա պետք է ամբողջացնի Թումանյանի բանաստեղծական դիմանկարը՝ շեշտադրելով յուրաքանչյուր ստեղծագործության և՛ գաղափարական հարցադրումները, և՛ գեղարվեստական արժեքը, և՛ պատկերային համակարգի առանձնահատկությունները: Եվ նյութի ամփոփման փուլում նա իր դասընկերներին կներկայացնի անցած նյութը:

Ամփոփելով՝ նշենք, որ ուսուցման այս եղանակը նպաստում է գրողի էության, աշխարհայացքի, մարդկային նկարագրի համակողմանի ուսումնասիրմանը: Աշակերտը, հիմնվելով տարբեր սկզբնաղբյուրների վրա, համադրում է գրողի ապրած ժամանակաշրջանը և այդ ժամանակաշրջանի հոլովույթում գրողի ունեցած տեղն ու դերը, գրական սկզբունքները, ազգային և համամարդկային հարցերի վերաբերյալ նրա դիրքորոշումը և ազգային գրականության մեջ նրա ստեղծագործական հետագիծը:

Ուսուցման ժամանակակից մեթոդների կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ աշակերտը միաժամանակ լինում է և՛ սովորող, և՛ սովորեցնող: Ուսուցման վերոնշյալ եղանակն էլ՝ «հեղինակի աթոռ», աշակերտին տանում է շփման և հաղորդակցման նոր դաշտ, հոգեբանական նոր հարթություն, որովհետև իրեն վստահված հեղինակի աթոռը պարտավորեցնում է ավելի պատասխանատվությամբ մոտենալ իրեն առաջադրված խնդրին, նյութը ավելի խորությամբ ուսումնասիրել, այն համակարգված ներկայացնել դասընկերներին՝ պատասխանելով նրանց հետաքրքրող բոլոր հարցերին:

Ժամանակակից աշակերտակենտրոն ուսուցման այս ճանապարհը բերում է ուսուցիչ–աշակերտ որակական նոր հարաբերություններ, որտեղ աշակերտը դուրս է գալիս ուսուցչի կողմից տրված նյութի պասիվ ընկալողի դերից, դառնում առաջադրված խնդիրը հետազոտող, նյութը համակարգող, ստեղծագործական մտածողությամբ օժտված անհատականություն: Տիրապետելով տեղեկատվական հաղորդակցության մեթոդներին՝ նա կարողանում է հիմնախնդիրների լուծման ճանապարհով հավաքել նյութը՝ կատարելով անհրաժեշտ ընդհանրացումներ և հիմնավորված եզրակացություններ:

Հոդվածի ներկայացման ստացման թվականը՝ 11. 02.2013 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Դ. Դեմիրճյան,** Երկերի ժողովածու, 1987 թ., հ. 14, էջ 242:
2. **Հրանտ Թամրազյան,** Հովհ. Թումանյան. Բանաստեղծը և մտածողը, Երևան 1995 թ.:
3. **Հովհ. Թումանյան,** Երկերի ժողովածու, 1951 թ.հ. 4:
4. **Նվարդ Թումանյան,** Հուշեր և զրույցներ, Երևան,1987 թ.:
5. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները. ձեռնարկ ուսուցիչների համար, «Այրեքս» 2004 թ.:

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ СОВРЕМЕННОГО МЕТОДА ОБУЧЕНИЯ «СТУЛ АВТОРА»

АРЗУМАНЯН АРМЕНУИ

Доцент кафедры новейшей армянской литературы Ереванского государственного университета, кандидат филологических наук

В основе современных методов организации учебного процесса лежит взаимосогласованная деятельность учителей и учащихся, которая проводится в соответствии с определенными законами и правилами. Это сочетание индивидуальных и групповых форм обучения, активность учащегося в познавательной деятельности и определенная степень руководства со стороны учителя.

Дата представления статьи: 11.02.2013 г.

IMPLEMENTATION PECULIARITIES OF THE "AUTHOR'S CHAIR" AS A MODERN TEACHING METHOD

ARMENUHI ARZUMANYAN

Associate Professor of the Chair of the Armenian Modern Literature, Yerevan State University, PhD in Philological Sciences

The distinctive feature of the "Author's Chair" as a teaching method is that the student who has carried out the research work presents the systematized subject method from the "Author's Chair" as the author of the theme. This fact makes him/her feel deeper sense of responsibility towards the task.

Article submission date 11.02.2013